# Հանձնման Աղոթք

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին
Մաս 3

Շատ հեշտ կարելի է ներքին խաղաղությունը կորցնել…

*…Երբ հանգամանքները անվերահսկելի են*

*…Երբ մարդիք անփոփոխալի են*

*…Երբ դժվարությունները անբացադրելի են*

*«…<u>քո արքայությունը գա</u>, <u>քո կամքը լինի</u> ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա։»* Մատթեոս 6:10

Աստծո Արքայությունը այնտեղ է ուր Հիսուսը որպես Թագավոր է ընդունված

Հանձնման աղոթքը նշանակում է

1. Ընդունում եմ Աստծո ծրագիրը

*«Ես <u>սովորել եմ բավարարվել</u> նրանով, ինչի մեջ որ կամ. գիտեմ կարիքի մեջ ապրելն էլ, առատության մեջ լինելն էլ. ամեն բանում ամեն ինչի <u>տեղյակ եմ</u>՝ թե՛ կշտանալուն, թե՛ քաղցելուն, թե՛ առատությանը, թե՛ կարիքին։ Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով։»* Փիլիպպեցիս 4:11-13

## Խաղաղության Աղոթք

Ով Աստված, պարգևիր ինձ խաղաղություն՝
ընդունելու այն ինչ որ կարող չեմ փոխել,
քաջություն՝ փոխելու այն ինչ որ կարող եմ,
և իմաստություն՝ գիտենալու նրանց
տարբերությունը:
Ապրեմ օրը օրին, և վայելեմ րոպեն րոպեին.
<u>ընդունեմ</u> դժվարությունը որպես <u>ուղղի դեպի խաղաղություն</u>:
Ապրեմ այս մեղսալի աշխարհում՝ ինչպես
Քրիստոսն ապրեց, ոչ թե ինչպես ես կուզեմ ապրել:
<u>Վստահեմ՝</u> որ դու ամեն ինչ դեպի բարին կտանես՝
եթե ես <u>հանձնվեմ</u> քո կամքին: Որպեսզի այս
կյանքում, ուրախ լինեմ՝ հնարին չափով ,
և հավիտենականության մեջ,
կատարյալ ուրախ՝ քեզ հետ: Ամեն

2. Հանձնվում եմ Աստծո ղեկավարության

*Համբերի՛ր և սպասի՛ր Տիրոջը…»* Սաղմոս 37:7

*«Ըստ մարմնի խորհելը մահ է, իսկ ըստ Հոգու խորհելը՝ <u>կյանք ու խաղաղություն</u>։»* Հռով 8:6

*« Աստծուն հնազանդվի՛ր և <u>խաղաղության մե՛ջ</u> եղիր նրա հետ. դրանով քեզ բարիք կգա։»* Հոբ 22:21

3. Վստահում եմ Աստծո հոգատարության

*«Հաստատուն միտք ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել։»* Եսայիա 26:3

*« Դուք նախ Աստծու արքայությունն ու նրա արդարությո՛ւնը փնտրեք, և այդ ամենը ավելիով ձեզ կտրվի։»* Մատթեոս 6:33

*«Ինքներդ ձեզ ներկայացրե՛ք…և ձեր անդամները՝ արդարության զենք՝ Աստծուն։»* Հռովմայեցիս 6:13

Հաջորդ Կիրակի

## Կարեկցության Աղոթք

Տերունական Աղոթք- Ներքին խաղաղության բանալին

Հովիվ Մարո Խաչիկեան